

Ա-49

Ս.Ղ.Ս.ՎՆԻ

ԱՐՈՒԶԵՅԹ

ՔՐԴԱԿԱՆ ՀԵՔՅԱԹ



891.99Ն

Ա-47

ՊԵՏԶՐԱՏ

891.9910

Ա-47

ԱՂԱՎՆԻ

30 MAY 2011

- 5 FEB 2013

„Ա. Բ. ՈՒԶԵՅԹ“

(ԳՐԳՍԱՆ ՀԵՔՑԱԹ)

Նկարներ

ԵՂ. ՍԱՐԳՍՅԱՆԻ



ՊԵՏՅՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ՑԵՐԵՎԱՆ

1938

- 6 FEB 2013

6574

Խմբագիր՝ Ա. Շահինյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաբանյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահրազյան



5533
38

32906-41

Գրավիտի լիազոր՝ Ղ-3583. Հրատ. 4541.
Պատվեր 223. Տիրած 4000.
Թուղթ 72x105. Տպագր. 2 մամ.
Մեկ մամ. 22 400. Կշիւն. Հեղինակ. 1 մամ.
Հանձնված է արտադրութեան 5 մարտի, 1938 թ.
Ստորագրված է տպագրութեան համար 11 մայիսի, 1938 թ.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65

1

Մտրա հողում մի ժամանակ
Ապրում եր մի մեծ ցեղապետ,
Վոր հոտերով իր սպիտակ
Մրցում եր բիւ աստղերի հետ:

Նա հողմասույր նժույգների
Ֆերամակներ ուներ բազում,
Ուներ հազար հարճ ու գերի,
Թիկնապահներ լայնաբազուկ:

Խարժ եր առնում հազար գյուղից,
Հազար բեռ եր մտնում իր տուն,
Եւ տեղ չկար մեղր ու յուղին,
Խաս գորգերին, արծաթ-վոսկուն:

Աշխարհ ելին բռնում նրա
Վրանները խաս ու բեհեզ,
Բայց սրտով միշտ տխուր եր նա
Աշնանային գիշերվա պես:

Վոչ հարճերի սիրով քնքուշ,
Վոչ հաղթական կռիվներում
Ցեղապետը ցամփե՛ իր անբույժ
Վոչ մի վայրկյան չէր մոռանում:

Ցեղապետն այդ չուներ վորդի,
Չուներ նա մի արու մանուկ,
Վոր տիրեր իր ժողովրդին
Ու սուրբ հոր պահեր կտրուկ:

Մի ժամանակ, յերբ վոր դեռ նա
Ջահել էր, քաջ, արյունը տաք,
Փույթ չէր անում՝ թե կը մնա
Անլծակից ու անզավակ:

Հոգին նրա ջահելության
Լի բերկրանքով էր դեռ շնչում,
Յեւ հպարտ սիրտն իշխանական
Մեծ համբավ ու փառք էր տենչում:

Ու հողմասույր ձիու մեջքին,
Ղուլամներով*) իր թիկնապահ,
Տարածում էր նա իր չորս դին
Սով-կոտորած, ավեր ու մահ:

Թալանում էր, այրում, ջարդում
Իշխաններին փոքրիկ ու մեծ,

*) Ղուլամ—ծառա:

Փողովրդին մերկ ու անտուն,
Ու վաստակում դանձ ու անեծք:

Ու այդպես ել տաք արցան մեջ
Անցավ նրա կյանքն աղմկուտ,
Ջահելության արևը պերճ
Թեքվեց մի որ դեպ մայրամուտ:

Ու ցեղապետն այդ ծերացավ,
Ծունկը ծալվեց, ձեռքը դողաց,
Թուխ մազերին ձմեռ իջավ
Ու աշխարհը դատարկ թվաց...

Ի՞նչ է կյանքում մարդն անզավակ,
Ծառն անպտուղ, հողն առանց բերք,
Առանց վորդու չկա հրճվանք,
Առանց բերքի՝ ի՞նչ ուրախ լերգ:

Ու մեծատուն ցեղապետի
Բաղմահարուստ, շեն հարկի տակ,
Իշխանից մինչ ծառան հետին
Դարձան վշտոտ ու գլխահակ:

«Վոչխարն անգամ իր գառն ունի,
Ձին մտրուկովն է իր հպարտ,
Միրտն ել անգամ անբան թռչնի
Ճանաչում է վառ հրճվանքն այդ:

Յես եմ մենակ, վոր բնության
Այդ պարզևից չունեմ բաժին,

Ա՛խ, կը խամբի աստղը իմ անվան,
Գետնով կտա ինձ թշնամին...»

Ու ծերունի ցեղապետի
Վիշտն անագին ծովի նման
Փռված գորեղ նրա սրտին՝
Մաշում եր այդ սիրտն առնական:

2


Սշնանային մի ամպոտ որ
Իր վրանում խաս ու բեհեզ
Նստել եր նա սիրտը տխուր,
Ձյունը գլխին՝ Միփանի պես:

Ձեռքի դայլանը վոսկեհուռ
Ծխում եր մեղմ, ողակ-ողակ,
Ու ցեղապետն աչքը տխուր
Հառած ջրին այդ սառնորակ,

Վշտոտ սրտով միտք եր անում
Փուչ աշխարհի, կյանքի վրա,
Ու ճանճն անգամ չեր մոտենում,
Ձեր վրըդովում միտքը նրա:

Բայց վրանի դուռը թավիշ
Դողաց հանկարծ ու յետ գնաց,
Ներս մտավ մի ծերուկ դերվիշ
Ու խոնարհեց գլուխը բաց:

— Վողջնւյն, ասաց, ս'վ ցեղապետ
Հրաման տուր, վոր առաջ գամ,
Հրաման տուր խոսեմ քեզ հետ,
Գուցե ցավիդ մի ճար ցույց տամ:



Նա արորեց աչքերը մեղմ,
Ասես քնից նոր արթնանար.

— Հէյ, վորոտաց, դայլան բերեք,
Խալի փոռք, թող դինջանա:

Հացի նստեց դերվիշը ծեր.

Յերբ հագեցավ քաղցը նրա,

— Իշխան, ասաց, իմ գլխի տեր,

Այս խոսքիս լավ ահանջ արա:

Ժառանգ չունես, չունես վորդի,

Վոր ոջախդ միշտ պահի վառ,

Շատ է դարդը քո ծեր սրտի,

Բայց բերել եմ լէս նրան ճար:

Հարձերը քո հարյուրավոր

Արու գավակ չեն ծնի քեզ,

Կուզես լինել թե բախտավոր,

Նորից պիտի դու կյանք մտնես:

Նորից պիտի քո ծեր գլխին

Փեսայության թագ դնես դու,

Վոր ամոքվի քո ցավը հին,

Կյանքդ կրկին դառնա խնդուն:

Մորա հողում մեր ընդարձակ

Շատ կան սիրուն, անմեղ կույսեր,

Վորոնց շահել կրճքերի տակ

Նոր են զարթնում զարունն ու սեր:

Սրի ուժով քո հաղթական
Դու նրանցից ընտրիր մեկին,
Ու մի կոխիլը շեմքը քո տան,
Մինչ ծնունդը քո զավակի:

Դեհ, խորհուրդն իմ այս լավ լսիբ
Ու կատարիր, վոր հայր լինես,
Վոր վոսկու մեջ ու ատլասի
Ել չնստես սգավորի պես...

— Դե, իմ իշխան, — դերվիշն ասաց, —
Բարով հասնես քո մուրազին,
Յերբ վոր վորդիդ աշխարհ յեկավ
Խնջույք կանենք մենք միասին:

3

Որեր անցան, անցավ տարի,
Գարուն իջավ Մորա հողին,
Ջյունը հալվեց Սիփան սարի
Ու կյանք առան յայլեքը հին:

Ձորք հավաքեց իշխանը ծեր,
Ձորք հավաքեց հազար-հազար,
Ու սրտի մեջ բերկրանք ու սեր
Ընկավ չափեց յերկիրն արար:

Վորտեղ հասավ, այնտեղ փոեց
Սով-կոտորած, ավեր ու մահ,

Յեղապետի սարսափն եր մեծ
Այն ահագին ծովի նման:

— Աման փախեք, փախեք, յեկավ,
Յեղապետը յեկավ հրով,
Յեղապետի զորքն է անբավ,
Յեղապետի սարսափը ծով:

Ու թողնելով բերք ու բարի,
Հասնող արտեր ու կալ ու կուտ,
Փախան լցրին Սիփան սարի
Ձորերը խոր, այրերը մութ:

Յեղապետը սարսափ սփռեց,
Մահ ու արշուճ սփռեց կրկին,
Հրով, սրով գտավ բերեց
Իր վորոնած անմեղ կույսին:

Ու յոթը զոր, յոթը գիշեր
Հարանիք արեց իշխանը մեծ,
Նա թագ դրեց զլիսին իր ծեր,
Կյանքը նորից խինդով լցվեց:

Հետո առավ թիկնապահներ,
Սարերն ընկավ այն անառիկ
Ու թափառեց զոր ու գիշեր,
Մինչև ծնունդը իր ժառանգի:

Իննը ամիս և իննը որ,
Իննը ժամը յերբ լրացավ,
Աստղի նման աչքերը հուր
Մի թուխ մանուկ աշխարհ յեկավ:

Յեղապետին մուժղա տարան,
Սարից իջավ, մտավ վրան,
Առավ զոնդաղն ու կռեց,
Վոր կռեց, աչքը մթնեց:

— Թեթև է այս զոնդաղն, ասաց,
Յես նրա մեջ չեմ տեսնում ինձ,
Հարամ լինի այն աղն ու հաց,
Վոր դու կերար իմ լի սուփրից:

Առեք, ասաց մորն ու տղին,
Տարեք զցեք ժայռերից ցած,
Սարի գայլերը կատաղի
Թող հոշոտեն սիրտը նրանց:

Յեղապետի այս խոսքի հետ
Հարճ ու զուլամ լուռ քարացան
(Ո՛վ եր տեսել այսպես աղետ,
Հոր սիրտն այսքան դաժանացած):

Յեղապետն այդ իր հարկի տակ
Մի սևամորթ զուլամ ունեք,

Ջյունի նման մազը ճերմակ,
Աչքերը մուխ, ինչպես գիշեր:


Առաջ յեկավ ծերուկն այս հեզ,
— Իմ տեր, ասաց, հաստատ լինես,
Քո հարկի տակ հիսուն տարի
Յեղել եմ յես հավատարիմ:

Պատիվը քո իշխանական
Շատ ե բարձրը իմ ծեր գլխից,
Արի, տեր իմ, դու այս մանկան
Մահվան գործը վստահիր ինձ...

Տխուր ժպտաց իշխանը ծեր,
— Ապրես, ասաց, իմ քաջ Արնու,
Իմ ճակատի գիրն ել այս եր...
Ինձ բեր նրանց շապիկն արնոտ...
.....

Ուղտը յեկավ չոքեց շեմքին,
Ու մահապարտ մորն ու մանկան
Արնոն կապեց ուղտի մեջքին
Ու յերեքով ճամբա ընկան:

Յեղապետը մնաց մենակ
Իր վրանուժ խաս ու բեհեզ,
Մնաց վշտի ծովում անտակ,
Ջյունը գլխին՝ Միփանի պես:



Իսկ ծեր Արնոն գնաց, գնաց,
Գնաց գտավ մի լեռնաղբյուր,
Ծունկի բերեց ուղտին հոգնած
Ու դուրս քաշեց դանակն իր սուր:

Կտրեց ուղտի ականջը ձախ,
Հարսի շապիկն արնով ցողեց,
Ու շապկով այդ արնաթաթախ
Դարձավ դեպի իշխանը մեծ:

4

Ուղտն ել գնաց, գնաց մոլոր,
Իր բոժոժի զընգոցով,
Տարավ լցրեց սարեր ու ձոր
Ջահել հարսի կսկիծը ծով:

Քառսուն գիշեր, քառսուն անգամ
Խավար իջավ Միփան սարին,
Ու նվաղեց ձայնը մանկան,
Ցամքեց կաթը մոր ծծերի:

Ցամքեց կաթը մոր ծծերի,
Ուղտի սապատը փոքրացավ,
Մինչև մի որ լուսադեմին
Ուղտն իր բեռով մի գյուղ մտավ:

Մտավ չոքեց գյուղի միջին
Ու այդպես ել չոքած մնաց,
Անտեր մանկան բեռը մեջքին,
Ու խոր վշտից աչքերը թաց:

Անտեր մանկան տխուր լացից
Գյուղ—գյուղովի հավաքվեցին,

Հարսին տարան ընեսի*) մոտ,
Ուղտին տվին ախոռ ու խոտ:

— Ո՞վ ես, այ հարս, ընեսն ասաց,
Մի ամչնա, յերեսդ բաց,
Իսկ հարսն ել թե՛ ընես ախպեր,
Անտեր եմ յես, չունեմ հեր-մեր:

Ջահել հարսի խոսքի վրա
Առաջ յեկավ մի ծերունի
Ասաց, — ընես, ականջ արա
Դու գիտես, վոր զավակ չունիմ:

Յես ել աղքատ ու անկարող,
Վոչ մուլք ունիմ, վոչ արա ու հող,
Բայց աղքատի սիրտն ե լայն,
Ու միշտ բաց ե դռները տան:

Ջահել հարսին ու իր վորդուն
Արի տուր ինձ, տանիմ իմ տուն,
Հարսին պահեմ յես հոր նման,
Տղեն լինի ճրագն իմ տան...

Հարսը նրա ձեռքը բռնեց,
Ծիծաղ—լացով ձակտին դրեց
Ասաց, — բալես անտեր վորը եր,
Յեղիր նրան հեր ու ախպեր...

*) Ընես—տանուտեր:

Հետո վողջը հավաքվեցին
Կնունք արին, կերան, խմին,
Ու վորբ տղին, այդ ուրից յետ
Անվանեցին Թուխ Աբուզեյթ*):

5

Մոր գուրգուրանքով, կորեկի հացով
Աբուզեյթը մեր շուտ հասակ առավ,
Բեխերը Թուխ-Թուխ, յերկու աչքը՝ ծով,
Չինարու նման մի տղա դառավ:

Մի սիրուն տղա քաջ ու անվեհեր,
Կուրծքը լեռան պես, բազուկը հզոր,
Ու ամեն անցորդ, ով նրան տեսներ,
Յերնեկ եր տալիս մորը բախտավոր:

Նա խոփը մենակ հողից կը հաներ,
Մենակ շուռ կտար քարը շաղացի,
Թուխ Աբուզեյթի բազուկն անվեհեր,
Կը սանձեր անգամ քաջ Քյոռոզլու ձին:

Աբուզեյթն ուներ ընկերներ քառասուն,
Ամեն մեկը մի ոճախի լեռ քար,
Ամեն մեկը մի շին ոճորքի սյուն,
Ու սրտով-հոգով միացած իրար:

*) Աբուզեյթ — հորից մերժված: Ծ. հ.:



2
3-204
5533
38
32906-61



Վոր իշխանը մեծ, վոր բեգն ու աղան
Մենակ սիրտ կաներ այդ գյուղը մտնել,
Ծուռ աչքով նայել հարս ու աղջկան
Կամ հեռու հանդից տավար թալանել:

Աբուղեյթը քաջ իր ընկերներով
Միշտ այնտեղ էր, ուր աղքատն էր կանչում,
Ուր ցեղապետի շահնեն*) մտրակով
Խեղճ ունչպարից հարկ էր պահանջում:

Աբուղեյթը քաջ, շահնեքի համար,—
Ինչպես ամպի դեմ Սիփանը լիներ,
Տղերքը նրա՝ չինարու անտառ,
Գյուղին մոտ գալու ել ո՛վ սիրտ կաներ:

Շահնեքը նրա համբավը տարան,
Տարան հասցրին մեծ ցեղապետին,
Ասին—ո՛վ իշխան, ճար ունես, արա,
Կարող ես, սանձիր թուխ Աբուղեյթին:

Նա մարդ չի թողնում, վոր գյուղին մոտ գա,
Ձի թողնում գանձենք կորեկն ու գարին,
Մեր ցեղապետի գլուխը վկա,
Բայրա**) չենք առել այս յերեք տարի...

*) Շահնա—հարկահավաք:

**) Բայրա—բնատուրք:

Յերբ ցեղապետը շահնեքին լսեց,
—Ինչ անեմ, ասաց այդ լիրբ լակոտին,
Թե կռիվ գնամ իմ բանակով մեծ,
Մեկ է թե յերկնից յես իջնեմ գետին:

Գյուղեր քանդելուց ինձ ոգուտ չկա,
Աբուղեյթն է մեկ իմ չար թշնամին,
Դե, շեյխ ու գիտուն կանչեցեք թող գան
Տեսնենք ինչ կասեն նրանք այս բանին:

Ցեղապետն ուներ հրեղեն մի ձի,
Յերկնում թևավոր, գետնին՝ վտտնավոր,
Նա վոչ մի ուժով չէր գալիս սանձի,
Ձիր ու շամիչ էր կերածն ամեն որ:

Գիտուններն յեկան ու խորհուրդ տվին,
— Մեր իշխան, ասին, կանչենք այդ տղին,
Ջահել տղա յե, արյունը պղտոր,
Չենց վոր նա տեսնի քո ձին թևավոր,

Ձի դիմանա այդ հրեղեն տեսքին,
Սանձել կուզենա, կուզենա նստել,
Ձին գետնով կտա իր խամ հեծվորին,
Դու ել կազատվես, քո ժողովուրդն ել:

Աբուղեյթն իր քաջ տղերքով քառսուն,
 Ջիրիդ խաղալուց նոր եր դարձել տուն,
 Յերբ վոր բանբերը մեծ ցեղապետի
 Նրա մոտ յեկավ յերկյուղը սրտին:

Ու՛ հաստատ լինի քո բազուկն, ասաց,
 Աչքդ չտեսնի տրամուխյուն ու լաց.
 Բայրամ*) ե անում ցեղապետը մեր,
 Ուզում ե լինես իր հացին ընկեր:

Ինչքան քաջ եր նա, այնքան ել խոնարհ,
 Գլխից վերև եր մոր խոսքն իր համար.
 Ու վորպես խոնարհ, հնազանդ վորդի,
 Նա իր ծեր մոր հետ նստեց խորհրդի:

Մայրն ասաց—վորդիս—յես յերազիս մեջ
 Այս գիշեր տեսա ցեղապետին մեծ,
 Տեսա նստել եր նա վրանի տակ,
 Յերեսը տխուր, մազերը ճերմակ:

Դու ել, Աբուղեյթ, հեծած ճերմակ ձին,
 Ման էյիբ գալիս սարերի դոշին.
 Ձին մուրազ ե միշտ, ճերմակը՝ բարի.
 Գնա, յերազն իմ բարին կատարվի:

*) Բայրամ—բարիկենդան:

Յեղապետը թե ասաց ձի նստիր,
 Ձին թևավոր ե, այս լավ իմացիր,
 Յերբ յերկինք լե՛նի, փորի տակ անցիր,
 Թե իջավ գետին, թամբին բարձրացիր:

Նա լսեց իր մոր խորհուրդն իմաստուն,
 Ու ճամբա ընկավ մուրազը սրտում.
 (Քառսուն տղերքն ել գյուղում մնացին,
 Վոր պաշտպան լինեն աղքատի հացին):

Խնջույք եր արդեն, յերբ վոր տեղ հասան,
 Սազ էյին զարկում յոթը կույր գուսան.
 Առաջ վագեցին զուլամներն աղի
 Ու վերև տարան ջահել զոնաղին:

Արծաթ սինիով փլավ բերեցին,
 Ծով դառան անուշ շարբաթն ու գինին,
 Իրարով անցան զոնաղներն արբած,
 Ու քեֆը տևեց մինչև լուսաբաց:

Յերբ Սիփան սարից արևը ծագեց,
 Վախճանին հասավ նրանց քեֆը մեծ,
 Հացը ժողվեցին զուլամներն հլու .
 Ու տերերն յելան ջերիդ խաղալու:

Ամեն բեզգազա իր նժույզն հեծավ,
 Իր ջիրիդն առավ ու դաշտում կեցավ:

Յեղապետը մեծ տվեց հրաման,
— Դուրս քաշեք, ասաց, իմ ձին աննման:


Թող նրան հեծնի զոնադն իմ ջահել,
Այսպես կտրիճին իմ ձին և վայել:
Ու յերբ դուրս բերին նժույզն հրեղեն,
Հուզմունքից դողաց Աբուզեյթ տղեն:

Համբուրեց ձիու գույգ աչքերը թաց,
Ձին այդ համբույրից ուրախ խրխնջաց,
Թափ տվեց քաշի խիտ մազերը սև,
Յերբ մեջքին թռավ հեծվորը թեթև:

Կերած-խմած ձի, պոկ յեկավ տեղից
Ու զիչ խրխինջով յերկինք բարձրացավ.
— Այս և, ասացին, տարավ քաջ տղին,
Նրա արևը պաղ լուսին դարձավ:

Բայց Աբուզեյթը վոր Աբուզեյթն էր,
Վոր իր թշնամուն ամոթով չաներ,
Հենց վոր ձին հասավ ամպերին ճերմակ,
Նա անցավ իսկույն ձիու փորի տակ:

Իսկ յերբ խրխինջով ձին իջավ գետին,
Շուռ յեկավ նորից ու նստեց թամբին...
Տեղում քարացան իշխանները մեծ,
Նրանց գլխներին ասես շուր մաղվեց:



Իսկ նա ձայն տվեց ցեղապետին ծեր,
— Յեղապետ, ասաց, ձիուդ ուժն այս էր...
Կարծում եյիր թե Աբուզեյթը քաջ
Ծունկի՞ պիտի գա քո ձիու առաջ...

Քո առատ հացով աչքս կապեցիր,
(Թող դատարկ մնա սուփրեն այդ հացի-)
Բայց դու մոռացար, վոր տղամարդուն
Վոչ թե շարքաթով,—սրով են հաղթում...

Այսպես վորոտաց Աբուղեյթ տղեն,
Հետո մտրակեց նժույզն հրեղեն,
— Հեյ, նամարդ, կանչեց, յես քո ձին տարա,
Վորտեղ քոնն ասես, ինձ մի մոռանա...

— Հայ, հայ, ձին տարավ, տարավ, բռնեցեք,
Իրարով անցան բեզդադա ու բեզ,
Բայց հեծվորին քաջ ել ուր բռնեյին,
Նա թռավ, ինչպես դաշտերի քամին:

Ու ցեղապետը ամոթից շիկնած,
— Այս ապտակը յես կուլ չեմ տա, ասաց,
Իշխանը լինեմ յես Մսրա հողի
Ու մի գյադա ինձ ամոթով թողնի...

Ժողվեցեք, ասաց, բանակն իմ հզոր,
Ուզում եմ այնտեղ լինել հենց այսօր,
Ուզում եմ կովել Աբուղեյթի գեմ,
Վոր այս ամոթը արյունով սրբեմ:

.....
.....

.....
.....

Հեյ, Աբուղեյթ, ուր ես, յեկավ,
Ցեղապետը յեկավ հրով,
Ցեղապետի զորքն է անբավ,
Ցեղապետի սարսափը՝ ծով:

Ցեղապետը մեզ կսպանի,
Հարս ու աղջիկ կառնի տանի,
Տները մեր հրի կտա,
Ցեղապետը մեզ չի գթա:

Ու գյուղացիք տկուր, անտուն,
Ան ու սարսափն իրենց սրտում,
Ցեղան կապին քոչ ու բարխան,
Դեպի Սիփան սարը փախան:

Աբուղեյթն եր, հեծավ իր ձին,
Գնաց կանգնեց ճամբի միջին.
— Յես չեմ թողնի, ասաց, գնաք,
Պատիվը մեր գեանովը տաք:

Մինչև այսօր ինչքան փախաք,
Ինչքան սուր ու սոսկում տեսաք,

Յեղապետն ել կրակ դառավ,
Յերես թռավ ու սիրտ առավ:

Մեր ծոցի մեջ ոձ տաքցուցինք,
Նա մեր հացին լեղավ շրիք,
Դե տրորենք գլուխն ոձի,
Ու տեր դառնանք մենք մեր հացին:


Դե յետ բերեք մալ ու խիզան*),
Մանգաղի տեղ առեք նիզակ,
Պաշտպան լեզեք ձեր տան-տեղին,
Յեա դարձրեք չար վոսոխին:

— Ճիշտ է խոսում տղան, ասին,
Չեյինք խորհել մենք այդ մասին,
Գեղը կանգնի՞ կոտորի գերան,
Դե միանանք կոտորենք նրան:

.....
Ու ոանչպարներ դարձան իրենց տուն,
Մանգաղի տեղակ առան սուր ու թուր,
Ու այն ահագին Յեփրատ գետի պես
Յելան քշեցին կովի ասպարեզ:

Տվին շարգեցին նիզակ, սուր ու թուր,
Գետերը դարձան կարմիր արնաշուր:

*) Խիզան—կին,



Խավարը ծածկեց դեմքն արեգական,
Հազար ոանչպար ու դուրամ ընկան:

Աբուզեյթն եր քաջ, նիզակը ձեռքին,
Հրաման տվեց քառսուն տղերքին,
— Դե թուք, սասց, իմ քառսուն թևեր,
Գերի բռնեցեք չար վոսոխին մեր:

Տղերքը կտրիճ քամու պես թռան,
Ջրերը քշին կովի մեջ մտան,
Չարկին շարդեցին սև դուլամներին
Ու ցեղապետին բռնեցին գերի:

.....

8

Ահագին վիշտն ու արցունքն աչքերին,
Ցեղապետը մեծ դարձել է գերի,
Նստել, քաշում է թագբեհը դեզին,
Հիշում է մեռած կնոջն ու աղին:

Հիշում է ճերմակ սուրուն կաթնաբեր,
Ու ձիերը, վոր մնացին անտեր,
Անտեր մնացին հարձերը գլոզալ,
Թե մուլքերը ծով, թե արտեր ու կալ:

Նա միտք է անում արցունքն աչքերին,
Անիծելով բախտն իր նամարդ սրի,
Իսկ այնտեղ դրսում Աբուզելթը քաջ
Չոքել է անա իր ծեր մոր առաջ:

— Խորհուրդ տուր, մայրիկ, ի՞նչ անեմ հիմա
Կլանք ես պարզեում դու նրան, թե՞ մահ...
Սև ձիու պոչից կապեմ լես նրան,
Թե թողնեմ նորից իշխե մեզ վրա...

Մայրն համբուրում է ճակատը վորդու,
— Վորդիս, ասում ե, գիտեմ քաջ ես դու,
Բայց ցեղապետը այն որը մեռավ,
Յերբ զոր ու գորքով քեզ վրա լեկավ:

Մեռածին, վորդի, ել չեն սպանում,
Նա գերին է քո, նստած զնդանում,
Ձնդանից հանիր, վերի ողեն տար,
Սուփրա բաց արա դու նրա համար:

Կանչիր քո կտրիճ տղերքին քառսուն,
Ու լավ պատիվ տուր քո գերած մարդուն,
Ինձ ել իզին տուր նստեմ ձեր քեֆին,
Վոր դու իմանաս ով է քո գերին...

Աբուզելթն ել վոր խոնարհ վորդին եր,
Վոր խորհուրդը մոր նա չկատարեր,
Նա հացի նստեց ցեղապետի հետ,
Շարբաթը հոսեց հանց Յեփրատա գետ:

Մայրն ել ելրամով լերեսը ծածկած,
Յեկավ ու կանգնեց իր գերու գիւաց,
Գրկի մեջ առավ նա իր քաջ վորդուն
Ու այսպես խոսեց, զայրուլթը սրտում.

— Ցեղապետ, ասաց. տղան այս կտրիճ,
Քո արյունից է ու իմ արգանդից.

Ղոնդաղը նրա չընդունեցիր դու,
Սարերը գցիր ինձ ու իմ վորդուն:

Բայց հողը նրան հայրութունն արեց,
Իսկ ժողովուրդն ել սիրտ ու ուժ տվեց,
Նա ուժեղացավ ժողովրդի պես,
Դե հիմի գրկիր, թեթեւ է, մի տես...

Ասաց ու զարկեց քաջ տղի մեջքին
Ու տղան չոքեց իր գերու բկին,
Վազրի պես ճանկեց կոկորդը նրա,
— Թողեք, վորոտաց, — չես խեղդեմ սրան:

Բայց մայրը բռնեց բազուկը տղի,
— Դե զսպիր, ասաց, սիրտըդ կատաղի,
Թեև քո գերին, վորպես մի չար ցին
Շրիք է չեղել մեր աղ ու հացին,

Կիսել է մեզ հետ կաթը վոչխարի
Խլել է կալից կորեկն ու գարին,
Թեև նրանից մենք շատ ենք լացել,
Բայց ցեղապետին պետք չե սպանել:

Նա ունի բազում վոչխար, կով ու ձի,
Տնքում են նրա հորերը հացի,
Յերկիրնք են հասնում լեռներն արծաթի,
Աշխարհ են բռնում գետերը կաթի:

Այդ ամենը մեր վաստակն է հալալ,
Մեր ճակատների քրտինքը գուլալ,
Վոր ցեղապետը իր տակը դրել
Ու արնածարավ վիշապ է դառել:

Թող բերե հիմա գանձերն այդ բուրբ,
Իր վոչխարների հոտը բշուրավոր
Քրտինքով ապրող մեր խեղճ գլուղին տա,
Ինքն էլ անփորձանք չելնի հեռանա:

Ծեր ցեղապետը սրբեց աչքը թաց,
— Խելացի խոսքին բան չունեմ, ասաց,
Կտրիճ եր վորդիս ու նա ինձ հաղթեց,
Ով հաղթող է միշտ, նրա խոսքն է մեծ:

Թող այնպես լինի, ինչպես կամեցաք,
Իմ գանձերը ձեզ, պարգևեք ինձ կյանք,
Վայելեցեք իմ սարերն արծաթի,
Այդպես եր գուցե գիրն իմ ճակատի...

Մեծ ցեղապետի այս խոսքի վրա
Քաջ Աբուղեթը մոտեցավ նրան,
— Յեղապետ, ասաց, իմ հայրն ես ու ձեր,
Բայց բաժանված են ճամբաները մեր:

Իմ ճամբան դեպի դագաթն է տանում,
Քոնը կորչում է խավար անդունդում,

Մենք այս աշխարհի կապույտ լերկնի տակ
Չենք կարող ապրել միաժամանակ:

Նա պիտի ապրի, ով քաջ է, հաղթող,
(Իսկ մալրիկն իմ ձեռք չբարկանա թող),
Դու յես քեզ համար սրել այս սուրը,
Դե հիմա խմիր մահվան մրուրը...

Ասաց ու խփեց մեծ ցեղապետին,
Մարմինը նրա տապալեց գետին,
— Թող մեռնի, — ասաց, — վոր նրա մահով
Կյանքը մեզ համար լինի ապահով:

Ու ամեն աղքատ, ամեն մի չեթիմ
Արև մաղթելով քաջ Աբուզեյթին,
Մեծ ցեղապետի գանձերից անբավ
Բաժին ստացավ, իր տունը տարավ:

1937 թ.



6574

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.

ՅՈՒ

ԱԳԱՅԻ
ԱԲՅԶԵՅԻՒ
ԴԻԶ ԱՐՄ. ՍՏՐ. ԵՐԵՎԱՆ